ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սոգիշսֆի 1

№ 4453-Ա « 15 » նոյեմբերի 2024 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի Հ.2694-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 01.11.2024թ. եզրակացությունը, քաղաքացու դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2010 թվականի հունիսի 24-ի «Երևանի Այգեստանի 11-րդ փողոցի 1-ին նրբանցքի հ.3/25 բնակելի տան և հողամասի նկատմամբ Գևորգ Միխաելի Գևորգյանի իրավունքները վերականգնելու, 605.8քմ մակերսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» հ.2694-Ա որոշման /այսուհետ՝ Որոշում/ մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) Որոշումը լրացնել նոր՝ 1.1 կետով հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը՝ «ք.Երևան Այգեստանի 11-րդ փողոցի 1-ին նրբանցքի հ.3/25 հասցեի հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:».

2) Որոշման վերնագրում, նախաբանում, 2-րդ կետում «605.8» թիվը փոխարինել «604.77» թվով.

3) Որոշման նախաբանում, 1-ին կետում «905.8» թիվը փոխարինել «904.77» թվով.

4) Որոշման 3-րդ կետում «աշխատակազմի քարտուղարին» բառերը փոխարինել «աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետին» բառերով:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ